Ուսուցողական ենթակոմիտեի ժողովի նշումներ
6/11/2020

Դպրոցների զեկուցումներ.

Պավել Տանտչեվ – Բրբենք միջնակարգ դպրոց

Աշակերտները ցանկանում են անձամբ վերադառնալ դպրոց: Նրանք հասկանում են, որ դպրոցը այլ ձև կունենա և հնարավոր է հիբրիդ մոդելի առկայությունը, այնուամենայնիվ նրանք ցանկանում են աշխատել այդ մեթոդով: Դպրոցը միայն սովորելու տեղ չէ: Եթե կիրառվի ուսուցման հիբրիդ մոդելը, ապա մարզիկները կցանկանան դպրոց հաճախել կեսօրից հետո:

Նադալի Ջոնս Մարտինես – Ջոն Բրոզ միջնակարգ դպրոց

Աշակերտներին դուր չի գալիս համացանցային ուսուցումը: Զում ծրագրի միջոցով ուսուցչի հետ հանդիպումները շատ հազվադեպ էր տեղի ունենում: Դասին մասնակցելը շատ դժվար էր: Աշխատանքը շատ էր: Աշակերտները ցանկանում են անձամբ վերադառնալ դպրոց: Նրանք համաձայն են այլ դասացուցակով սովորել և հասկանում են մաքրության կարևորությունը: Նրանք ցանկանում են ընդունել ուսուցման նոր համակարգը: Նրանք կարոտել են դպրոցը և դպրոցի առօրյան:

Ներկայացում – Դեբբի Մքհոռնի – Հատուկ նշանակությաբ ուսուցիչ, Ուսուցողական տեխնոլոգիա

Դեբբին Գուգլ սլյադների միջոցով խմբին ներկայացրեց հեռակա ուսուցումը և խոսեց կարևոր տարրերի մասին:
https://docs.google.com/presentation/d/1PL3J2BAknS8lsbXbbGMCnO10lQ6JlqLAqtUC6dB4eKE/edit?usp=sharing

Մենք բոլորս դեռ գործում ենք համաճարակի ռեժիմի ներքո և միաժամանակ փորձում ենք իրականացնել հեռակա և/կամ հիբրիդ ուսուցման մոդելները: Նաև, ուսուցիչները և աշակերտները գտնվում են տնային պայմաններում: Այս ամենը դեռ այստեղ է և աշնանային անումային շրջանը շատ դժվար է լինելու:

Դժվար է միաժամանակ կառավարել վեց դասընթաց: Աշակերտների և ուսուցիչների համար ավելի հեշտ է կառավարել երկու կամ երեք դասընթաց:

Ամենամեծ մտահոգությունը ուսուցիչներին վերապատրաստելու և համագործակցելու ռեսուրսներնեն և ժամանակը:

Կարևոր է հաշվի առնել կրթության շրջված մեթոդը, որի ընթացքում աշակերտները կկարողանան սկզբնական դասը ստանալ համացանցում, իսկ հետո շփվել ուսուցչի հետ դպրոցում:

Հատուկ նկատառումներ կան դասընթացների բովանդակության, ինչպես նաև աշխարհի լեզուների և մաթեմատիկայի ոլորտներում:

Ուսուցիչներին ժամանակ է հարկավոր պատրաստվելու, տեսանյութեր մշակելու և աշակերտներին ակնարկներ կատարելու համար:

Տարբեր դասացուցակների քննարկում.

Հատուկ նկատառումներ կան դասընթացների բովանդակության, ինչպես նաև աշխարհի լեզուների և մաթեմատիկայի ոլորտներում:

Ուսուցիչներին ժամանակ է հարկավոր պատրաստվելու, տեսանյութեր մշակելու և աշակերտներին ակնարկներ կատարելու համար:

AP դասավանդող ուսուցիչները գիտակցում են, որ պետք է ճկուն դասացուցակով աշխատել:

Զեկույց- Հատուկ ուսուցում – Թամրա Շերն, Հատուկ ուսուցման բաժնի վարիչ

Դեռ ոչ մի ուղղորդում չկա նահանգի կամ դաշնային կառավարության կողմից:

Մտահոգություններից մեկը հատուկ ուսուցման աշակերտների սովորական դասասենյակում դասավանդում ստանալն է: Դրա համար տարբեր մոդելներ են մշակվում նրանք կարիքները հոգալու համար: Ծրագրերը կփոփոխվեն դպրոցական շրջանի կողմից՝ դասացուցակի ընտրություն կատարելուց հետո: Ստացված ծառայությունները ուրիշ տեսք կունենան:

Դպրոցական շրջանը պետք է հաշվի առնի և պլանավորի նաև այն աշակերտներին, ովքեր դժվարությամբ կհեևեն հասարակական հեռավորության հրահանգներին: Ուսուցիչներին հարկավոր են ձեռնարկել անվտանգության ավելի շատ միջոցներ: Խոսվեց այն մասին, որ մի քանի աշակերտների հարկավոր կլինի գրասեղանի միջնապատեր տեղադրել և դասընթացները անցկացնել փոքր խմբով:

IEP ծրագրերը կարող են սկսվել հեռակա միջոցով:

Հատուկ ուսուցման բաժինը նույնպես կապ կհաստատի առողջական փխրուն վիճակի մեջ գտնվող աշակերտների ընտանիքների հետ:

Հաջորդ ժողովը տեղի կունենա 2020 թվականի հունիսի 18-ին:

Փոքր խմբի առաջին ժողովը տեղի կունենա կեսօրից հետո ժամը 3-ին, որից հետո կեսօրից հետո ժամը 4-ին տեղի կունենան մեծ խնբի ժողովը:

Օրակարգ.

1. Վերանայել դասացուցակը

2. Սկսել ուսումնական ծրագրի վերաբվերյալ քննարկումը